



ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՐԵՐՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆ

Դու շատ ես տեսել կոիվ ու ավեր.
Քո ճամփի վրա եղել են դավեր.
Ազգեր են եկել՝ կիրթ ու վայրենի,
Սրով ներխուժել հողդ հայրենի:

Այրել են այն, ինչ արյամբ ես կերտել.
Քանդել են այն, ինչ ձեռքով ես բերդել,
Եղծել երազն ու երգը քո հոգու
Իրենց մթությանը՝ քիրտ ու ահարկու:

Դու լոկ ուզել ես մնալ անաղարտ
Ու մատչաններում քո սուրբ մագաղաթ
Ապրել երկնելով, քրտինքով արդար
Եվ պահել հոգուդ երգերն անվթար:

Բայց ճամփաներում անցած դարերի
Քո սիրտը եղավ հեռան սրերի,
Մաշվեցիր, և քո հոգին զանձաշատ
Բյուրեղանալով՝ դարձավ ադամանդ:

Քեզ շիրմատաններ թողեց թշնամիդ՝
Տեղ թողեց, որ դու ավանդես հոգիդ,
Լերկ լեռներ թողեց ու մի փշուր հող,
Որ այնտեղ մեռնես սուլած, սրտադող:

Քեզ կիսեց Մշո ճաղընտիրի պես,
Քո որդոց մեան արեց երկու կես,
Եվ հոգուդ երգը վնսմ, վնսհափառ
Ցրեց աշխարհում՝ տարագիր, թափառ:

Բայց կերտվածքը քո ադամանդակուտ,
Հոգու հանճարով այնպես ոսկեհոտ
Մոխրի տակից էլ փայլեց աշխարհին,
Այրեց, կուրացրեց թշնամուն, չարին:

Եվ շիրմատաններ լինելու տեղակ՝
Չոր փուշն էլ դարձրիր դու վարդ ու մեխակ,
Քո ծեռ քարերը դարձրիր Զվարթնոց,
Անապատներդ՝ հեքիաթ ոսկեզօծ:

Դու լույս քամեցիր քարից երփներանգ,
Եվ հուրը հոգու քո ամենաթանկ.
Քարի մեջ դրիր երգը քո սրտի
Եվ ամրությունը քո մեծ հավատի:

Մեր մոր Արմավիր ու Տիգրանակերտ,
Դու մեր մոր Անին՝ բյուրական մի բերդ.
Մեր մոր Արտաշատ ու Վաղարշապատ՝
Դարերից ձգված մինչ Սարդարաբադ:

Մեր քաղաքների քարահյուս ձուլվածք՝
Հայուս պատկերն ես ազօր մասիված,
Ադամանդաշար մատանու մեան
Իմ Էրեբունի, իմ մոր Երևան:

Իմ Էրեբունի, դու պիտի ապրես,
Հյուսից-հարավից պիտի հավաքվես՝
Քո մահրակառ երգերով անտի
Եվ հավերժական քո խաղաղությանը:

